ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2015թ. **N----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել Երևան քաղաքի ավագանու 5-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը /կցվում է/։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքում հուշարձան տեղադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:
3. Վլադիմիր Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը տեղադրելու մասին:
4. Երևան քաղաքում հուշարձան տեղադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:
5. Երևան քաղաքում հուշարձանի տեղադրման վերաբերյալ համաձայնություն տալու մասին:
6. Երևան քաղաքում «Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգի» անվանակոչելու մասին:
7. Արա Սարգսյանի դիմաքանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:
8. Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:
9. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:
10. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 270-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
11. Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու, լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
12. Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N 161-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
13. Գույք նվիրաբերելու մասին:
14. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
15. Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
16. Երևան համայնքի սեփականություն համարվող Բուզանդի փողոցի հ. 33/2 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքն անհատույց օտարելու մասին:
17. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
18. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին:
19. Ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու իրավունք տալու մասին: